ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 47[1]. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու կանոնները խախտելը

Բժշկական փորձաքննության իրականացման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝

սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Ախտաբանաանատոմիական հերձումների և (կամ) հետազոտությունների անցկացումը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսվող պայմանների խախտմամբ հերձում և (կամ) հետազոտություն իրականացնողի նկատմամբ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին պայմանագրի առկայության դեպքում դրա իրավունքն ունեցող անձից բուժսպասարկման համար վճարներ գանձելը կամ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրումը մերժելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումը չափումների և միջամտությունների (մանիպուլյացիոն) սենյակներում հիվանդասենյակներում, լոգարաններում, սանհանգույցներում՝

առաջացնում է տուգանքի նշանակում, յուրաքանչյուր դեպքի համար՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

(47[1] -ին հոդվածը լրաց. 08.04.08 ՀՕ-7-Ն, խմբ. 03.10.11 ՀՕ-259-Ն)